


Փոխանցիչները պատրաստվել և փորձարկվել են մինչև 40 մթն. ճնշման համար: Ելքի կախումը ճնշումից գործնականորեն ուղղագիծ է:

Փոխանցիչների զգայունությունը կարող է փոփոխվել ցանկացած սահմաններում՝ իդդ—3 դդայունությունը փոխարկելու և օսցիլոգրաֆի շեյֆները ընտրելու միջոցով: Փոխանցիչները կարող են աշխատել նաև ամեն մի այլ ուժեղացարով:



Կ. 7.

Ճնշման փոխանցիչները, որոնք օգտագործում են նախապես լարված զսպանակի նկարագրված սկզբունքը, կիրառվել են նաև Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ջրա-էներգետիկ ինստիտուտում:

7-րդ նկարում պատկերված օսցիլոգրամը նկարահանվել է 77300 ձիռուժ կարողությամբ սուրբինի և 285 մ ճնշումով փորձարկումների ժամանակ, կավիրացիոն ռեժիմներում:

Նշված օսցիլոգրամի վրա տատանումները գրանցված են՝

1. արտածման խողովակի ճնշման ու վակուումի,

2. ճնշումնային խողովակի ճնշման,

3. սպիրալային կամերայի ճնշման բացարձակ ստատիկ արժեքների շուրջը:

Գրանցված է նաև 50 պր/վրկ լարումը՝ ժամանակի մասշտաբի համար:

Օսցիլոգրամի վրա կորագծերի շեղման 1 մի-ը համապատասխանում է 0,5 մթն. ճնշմանը և վակուումին:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Центральная лаборатория Арменэнерго. Отчет по изготовлению и наладке магнито-электрического вибрографа, 1955 г.
2. Ходжамирян Ю. Е., Измерение вибрации энергетического оборудования. Технический бюллетень Центральной лаборатории Арменэнерго, № 2, 1956 г.
3. Тимофеев Б. Б., Магнитоупругий манометр. Авторское свидетельство № 96332.
4. Центральная лаборатория Арменэнерго. Отчет по изготовлению и наладке магнитоупругого датчика давления, 1955 г.

## ՆՍՏԵՑՎԱԾՔՆԵՐԻ ԸՆՏՐՈՒՄԸ, ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԴԵՏԱԼՆԵՐԻ ԶԱՓԵՐԻ ՑՐՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ

### Ռ. ԶԱՐԱՐՅԱՆ

Տեխնիկական գիտությունների բեկնածու

Բացակաների կամ ձգվածքների ամենափոքր և ամենամեծ արժեքներով նստեցվածքների ընտրուման գոյությունը ունեցող եղանակը (ամաքսիմումի և մինիմումի մեթոդը) օրինականացված է OUS 1020 և OUS 1030 տեղեկատու աղյուսակներում, որոնք հաստատվել են 1931 թ. ԳԴՈՍ 2689—54 և ԳԴՈՍ 3047—54-ում: Այդ եղանակը (որը քննադրատեղ են ականավոր գիտնականներ՝ R. U. Բալակշինը, Ն. Ա. Բորոդակը, Ա. Բ. Յախինը և ուրիշներ) հաշվի շի առնում դետալների շափերի ցրտամբ արտադրության պրոցեսում և,

ըստ էության, չի տալիս բացակաների ու ձգվածքների ճիշտ արժեքները:

Նորմալ օրենքի (Գառասսի օրենքի) համաձայն, դետալների արտադրության պրոցեսում նրանց չափերի բաշխումն ապահովելիս հնարավոր է 42%-ով մեծացնել լծորդվող դետալների թույլատվածքները, առանց նստեցվածքի բնույթին վնաս պատճառելու, այսինքն՝ կարելի է համապատասխանորեն ընդարձակել նստեցվածքների կիրառության շրջանը: Այդ հավասարագոր է, մոտավորապես, մի կարգով ավելի կոպիտ դետալների

պատրաստմանը և համգեցնում է արտադրանքի խնդրաժեռքի իշեցմանը:

Նորմալ օրենքի համաձայն դետալների շափերի բաշխման ապահովումը հաջողությամբ կատարվում է մասսայական և խոշոր սերիական արտադրության մեջ: Զափերի ավտոմատիկ ըստացման միջոցով դետալները պատրաստելու ժամանակ լայն կիրառություն են գոնում արտադրության ընթացքի վերահսկման ստատիկական և ակտիվ մեթոդներու:

Ցրման նորմալ օրենքի համաձայն, լծորդվող դետալների (լիսեռի և անցքի) չափերը բաշխելիս, լծորդվող դետալների անկախ փոփոխական շափերի գումար հանդիսացող բացակների և ձգվածքների բաշխումը նույնպես ենթարկվում է նորմալ բաշխման օրենքին:

Ենելով դրանից, ներկա հորվածում, ըստ ստանդարտի, բացակների և ձգվածքների սահմանային արժեքների գոյություն ոմենքող աղյուսակների փոխարեն հանձնարարվում է մեծությունների փորձնական սահմանային արժեքների աղյուսակը՝ OUS-ով: Նախատեսված և կոմբինացված նստեցվածքների համար:

Արտադրական պայմաններում տեխնոլոգիական օպերատորացիայի նորմալ ընթացքը խախտող պատճառների հետևանքով դետալների չափերի բաշխումները հնարավոր են նաև այլ օրենքների համաձայն: Այս դեպքում փոփոխվում է բացակների կամ ձգվածքների բաշխման բնույթը: Բաշխումները նորմալների հետ համեմատելու միջոցով որոշվում է այն հավաքումների քանակությունը, որոնց բացակը կամ ձգվածքը դուրս է գալիս գործնական սահմանային արժեքներից: Այդ տվյալներից կարելի է դատել նաև արտադրության մեջ կիրառվող տեխնոլոգիական օպերացիաների կանոնավորման որոշ մեթոդների ընդունելի լինելու մասին:

## I. Բացակների գործնական-սահմանային արժեքների որոշումը

Այս արժեքները որոշվում են այն նախադրյալից, որ դետալների չափերը արտադրության պրոցեսում բաշխվում են ըստ Գոնումի օրենքի, երբ պահպանվում են հետևյալ պայմանները.

ա) միջին քառակուսային շերտամը հավասար է դետալի թույլտվածքի մեկ վեցերորդ մասին,

բ) չափերի խմբավորման կենտրոնը համընկնում է դետալի թույլտվածքի դաշտի մեջտեղի հետ:

Այդ պայմանները կարելի է գրանցել հետևյալ ձևով՝ անցքի համար՝  $\sigma_A = \frac{\Delta A}{6}$ ,  $M(x) = D_{x\bar{x}}$  որտեղ՝  $\Delta A$ -ն անցքի չափի թույլտվածքն է և  $D_{x\bar{x}} = \text{անցքի } M_{\bar{x}} \text{ միջին չափը}:$

Կմեռովի համար՝  $\sigma_B = \frac{\Delta B}{6}$ ,  $M(y) d_{y\bar{y}}$ , որտեղ՝  $\Delta B$  և  $d_{y\bar{y}}$  լիսեռի թույլտվածքը և միջին չափն են:

Գոնումի օրենքի համաձայն, լծորդվող դետալների չափերը բաշխելիս, բացակների կամ ձգվածքների մեծությունների բաշխումը նույնպես ենթարկվում է այլ օրենքին: Այդ դեպքում բացակի միջին քառակուսային շերտամը՝  $\sigma_S = \sqrt{\sigma_A^2 + \sigma_B^2}$ , իսկ բացակների չափի խմբավորման կենտրոնը՝  $M(z) = S_{x\bar{x}}$ , որտեղ՝  $S_{x\bar{x}} = \text{կազմում } \text{է բացակի } M_{\bar{x}} \text{ մեծությունը}:$

Ընդունելով, որ լիսեռի և անցքերի թույլտվածքները հավասար են (որ արդարացի է 3, 3 ա, 4, 5, 7, 8, 9 ճշտությունների դասերի համար) և նշանակելով  $\Delta A = \Delta B = v$  միջոցով՝ կատանանք՝  $\sigma_S = \frac{\sqrt{2}}{6} v = 0,235v$ : Սահմանային շերտամները բացակների խմբավորման կենտրոնից  $S_{x\bar{x}} \pm 3\sigma_S = S_{x\bar{x}} \pm 0,705v$ :

Եթե որպես օրինակ վեցնենք սահող նըստեցվածքը, ապա այլ դեպքում  $S_{x\bar{x}} = v$ , իսկ բացակների գործնական սահմանային արժեքները կլինեն:

$$v \pm 0,705v = 1,705v \div 0,295v:$$

Այս լուծման արդյունքները համեմատելով «մաքսիմում-մինիմում» մեթոդով լուծման արդյունքների հետ, կարելի է անել հետևյալ հետևող դյունները.

1. Վ-ին հավասար թույլտվածքներով դետալների պատրաստումը հանգեցնում է բացակի մինչև 1,41v տատանմանը, չոր-ի փոխարեն, «մաքսիմում-մինիմում» մեթոդով լուծելու դեպքում:

Դրա հիման վրա, ենելով բացակի թույլտվածքից, լծորդվող դետալների թույլտվածքները կարելի է մեծացնել մինչև 42%-ով:

$$\left( \frac{2v - 1,41v}{1,41v} \cdot 100 = 42 \right);$$

2. Գոյություն ունեցող OUS 1020 ու OUS 1030 ստանդարտների և ԳՈՒՏ 3047-54 ու ԳՈՒՏ

2689—54 բացակների ու ձգվածքների աղյուսակների փոխարեն, շափերի նորմալ բաշխումն ապահովող արտադրության պայմանների համար անհրաժեշտ է հանձնարարել հենց այդ մեծությունների գործնական սահմանային արժեքների աղյուսակները։ Հետևյալ աղյուսակում, ձգվածքների գործնական սահմանային մեծությունների հետ միասին (սյունակ 5 և 7) բերված են այդ նույն մեծությունների գործնական սահմանային արժեքները (սյունակ 6 և 8):

Անցումնային նստեցվածքները ձգվածքները անցքի սիստեմում մկ-ով

Նույնական թափանցիքներ	Լիքուագ	Անցքը	Զույգը	Նույնական թափանցիքները մկ-ով			
				30 մինչև 50	80-ից մինչև 120		
1	Γ <sub>1</sub>	A <sub>1</sub>	Ամենամեծ Ամենափոքր	+28 +1	+24 -5	+38 +2	+33 +7
	T <sub>1</sub>	A <sub>1</sub>	»	+20 -6	+16 -2	+28 -9	+23 -4
	H <sub>1</sub>	A <sub>1</sub>	»	+14 -13	+10 -9	+19 -18	+14 -13
	Π <sub>1</sub>	A <sub>1</sub>	»	-7 +19	+3 -15	+9 -27	+4 -22
2	Γ	A	»	+35 -9	+29 -3	+45 -12	+37 -4
	T	A	»	+27 -18	+21 -12	+35 -23	+27 -15
	H	A	»	+20 -24	+14 -18	+26 -32	+18 -24
	Π	A	»	+8 -35	+2 -29	+12 -47	+4 -39
3	Γ <sub>2</sub> a	A <sub>2</sub> a	»	+42 -22	+33 -13	+58 -31	+46 -19
	T <sub>2</sub> a	A <sub>2</sub> a	»	+34 -30	+25 -21	+48 -41	+36 -29
	H <sub>2</sub> a	A <sub>2</sub> a	»	+27 -37	+18 -28	+38 -51	+26 -39
	Π <sub>2</sub> a	A <sub>2</sub> a	»	+16 -49	+6 -40	+20 -69	+8 -57

Սանորություններ.—

- Բացակները նշվում են իրեն բացասական ձգվածքներու
- Սյունակ 5 և 7-ում բերված են ձգվածքների սահմանային մեծությունները ըստ ԳՈՍ-ի
- Սյունակ 6 և 8-ում բերված են ձգվածքների գործնական սահմանային մեծությունները,

1, 2 և 3-a ճշտությունների կարգերի նստեցվածքների համար, որոնց լիսեռի թուլավածքները և անցքերը հավասար չեն, գործնական սահմանային արժեքները որոշվում են հետևյալ ֆորմուլամբաներով՝

$$s_{(N)} = \sqrt{\frac{\sigma_A^2 + \sigma_B^2}{6}} = \sqrt{\frac{\Delta A + \Delta B^2}{6}}$$

$$S_{st} = (N_{st}) \pm 3s_{(N)}$$

Ձգվածքների սահմանային և գործնական սահմանային արժեքների մեծությունների համեմատությամբ ցույց է տալիս, որ նորմալ օրենքով դետալների շափերի բաշխման հաշվառումը դետալների արտադրության պրոցեսը հեշտացնում է մոտավորապես նշուրիյան մեկ կարգով։

## II. Բաշխում ըստ հավասար հավանականության օրենքի

Արտադրական պայմաններում շափերի բաշխումը, ըստ հավասար հավանականության օրենքի, գործնականորեն կարող էր ստացվել կտրիչի հավասարաշափի մաշվածքի ժամանակ և այն պայմանով, որ հավասար հավանականության օրենքի 1 պարամետրը շատ ավելի մեծ է բաշխման նորմալ օրենքի օ պարամետրից, այսինքն՝  $\frac{1}{\sigma} = \sim$ :

Եթե դետալների շափերը նրանց արտադրման պրոցեսում բաշխվում են ըստ հավասար հավանականության օրենքի, լ=ν պարամետրով, ապա այդպիսի դետալներից կազմված հավաքումներում բացակը կրաշխալի Սիմպոնի օրենքի (հավասարակումք եռանկյան) համաձայն [2]:

Այդ դեպքում գործնական սահմանային արժեքներից անցնող բացակների ստացման հավանականությունը կորոշվի՝

$$2 \int_0^{+1,295} \frac{S}{v^2} dv = 2 \times 0,0435 \quad \text{արտահայտությունից}$$

և կազմի 8,70%:

## III. Բաշխում ըստ Սիմպոնի օրենքի

Դետալների շափերի բաշխումը, Սիմպոնի օրենքի համաձայն, ստացվում է այն ժամանակ, երբ գերիշխող գործոնը, ի տարրերություն նախ-

ընթաց դեպքի, փոփոխվածմ է անհավասարաշատի կերպով. օրինակ, երբ չափերի ավտոմատիկ ըստացման մեթոդով դետալները մշակելու ժամանակ կտրիչի մաջումը տեղի է ունենում սկզբում դանդաղեցված, իսկ այնուհետև՝ արագացված ձևով. Այդպիսի դետալներից կազմված հավաքումներում բացակաների բաշխման օրենքը մոտ է նորմալ օրենքին:

Գործնական սահմանային արժեքներից անցնող բացակաների ստացման հավանականությունը որոշվում է հետևյալ արտահայտությունից.

$$2F_1(s) = 2 \int_0^{+0,295v} \frac{8s^3}{3v^4} ds \quad \text{և} \quad \text{կազմում} \quad \pm 1,08\%$$

#### IV. Բաշխում փորձենկան անցումների մեթոդով աշխատելիս

Բացակաների կորի հավասարությ դետալներից կազմված հավաքումներում, որոնք պատրաստվել են փորձնական անցումների մեթոդով, արտածել է ինժեներ Մ. Մ. Նեստերովսկին [7]:

Հավանականության խոռությունների արտահայտությունների ինտեգրալը որոշում ենք, որ ստորին գործնական սահմանից ( $0,295 v$ ) դուրս եկող բացակաների ստացման հավանականությունը կազմում է  $4,1\%$ , վերին գործնական սահմանից՝  $0,34\%$ , իսկ ընդամենը՝  $4,44\%$ :

#### V. Խմբավորման կենտրոնների ցրման (համարումների) հաջառումը

Նախընթաց հաշվարկներում մենք հաշվի չէինք առնել ինմրավորման կենտրոնների ցրումը (համարաման սխալները) դետալների մի քանի խմբեր խառնելու ժամանակի: Պահանջվող ճշգտությունը ապահովելու համար դետալի թույլտվածքը պետք է հավասար լինի սարքավորման ցրման դաշտերի և խմբավորման կենտրոնների մեծությունների գումարին:

Համալարման թույլտվածքը ընդունելով  $\eta \leq 2$  օրոտեղ ո-ը դետալների չափերի միջին քառակուսային շեղումն է մի խմբի պատրաստման ժամանակ, ապա դետալի թույլտվածքը համար

կլինի  $v=63+\eta=80$ , խառը խմբերի դետալներից կազմված հավաքումների խոտանի տոկոսը որոշվել է սարքավորման ու խմբավորման կենտրոնների ցրման տարբեր օրենքների համար և բերվում է ստորև:

ա) Սարքավորման ու խմբավորման կենտրոնների ցրումը ենթարկվում է Գառուսի օրենքին:

Այս դեպքում բացակաների ցրման գոտին կազմում է  $\pm 0,558\%$ : Այդ արժեքները փոքր են  $\pm 0,705v-\eta$ , հետևաբար խոտան չկա:

բ) Սարքավորման ցրումը ենթարկվում է Գառուսի օրենքին, իսկ խմբավորման կենտրոններին՝ հավասար հավանականության օրենքին:

Այս դեպքում բացականի ցրման գոտին  $\pm 0,612\%$  է, հետևաբար, խոտան չկա:

գ) Սարքավորման ու խմբավորման կենտրոնների ցրումը ենթարկվում է հավասար հավանականության օրենքին:

Այս դեպքում հավաքումների խոտանի մոտավոր տոկոսը որոշումը բերում է  $\pm 1,43\%$ :

Սակայն ակներև է, որ խոտանի տոկոսը այնուամենայնիվ շատ ավելի փոքր է, քան այդ նույն խնդրի լուծման դեպքում առանց համալրման համար պահանջվող թույլտրվածքի (տե՛ս II կետը):

Համեմատելով V կետում բերված լուծումների արդյունքները I և II կետերի լուծումների հետ, կարելի է նկատել, որ առաջին դեպքում խոտանի տոկոսը անհամեմատ փոքր է (կամ միանգամայն բացակայում է), քան երկրորդ դեպքում: Հետևաբար, կարելի է եղանակացնել, որ համալրման համար թույլտվածքի մոտցնելը հանդիսանում է ոչ միայն դետալների մշակման, այլև նստեցվածքների պահանջվող ճշտությունն ապահովելու պայման:

Կերպում քննվել են այն նստեցվածքները, որոնք ստացվել են դետալների հավաքման շնորհիվ, և որոնց չափերի ցրումը ենթարկվում է բաշխման տարբեր օրենքների: Նրանցով չի սպառվում արտադրության մեջ տեղի ունեցող չափերի բաշխման տարբեր օրենքների մեջ բազմադասությունը [1, 2, 3, 9]: Սակայն նրանց մեծ մասը մատնաշուամ է տեխնոլոգիական օպերացիայի նորմալ ընթացքի այս կամ այն խախտումների առկայությունը, բացահայտում է այդ պատճառները և

Հենց դրանով էլ հնարավորություն է տալիս վերացնելու այդ խանգարումները:

Վերահսկողության գոյություն ունեցող ստատիստիկական և ակտիվ մեթոդները, որոնք աստիճանաբար ավելի մեծ գործադրություն են դառնում խոշոր սերիական և մասսայական արտադրություններում [9,10]. Թույլ են տալիս ժամանակին հայտնաբերել և վերացնել դետալների չափերի բաշխման մեջ եղած դեֆեկտները:

Էական նշանակություն ունի զանազան օպերացիաների միջին քառակուսային շեղումների և համալարման համար պահանջվող թույլտվածքների նորմատիվների սահմանումը:

Կատարելով մշակման համար պահանջվող ճշտության պայմանը, մենք կարող ենք ապահովել նաև հավաքման համար պահանջվող ճշտությունը:

Բերված դեպքերի վերլուծման հիման վրա կարելի է գալ այն եզրակացության, որ մասսայական և խոշոր սերիական արտադրությունում, դետալների արտադրության վերահսկման ստատիստիկական և ակտիվ մեթոդների կիրառման դեպքում, նստվածքների ընտրության հանձնարարվող եղանակը, գործնական սահմանային արժեքների համաձայն, հանդիսանում է լիովին ընդունելի և թույլ է տալիս 42%-ով մեծացնել դետալների թույլտվածքները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бородачев Н. А., Обоснования методики расчета допусков и ошибок кинематических цепей, ч. 1. Простые скалярные ошибки, изд. АН СССР, 1943.

2. Бородачев Н. А., Анализ качества и точности производства, Машгиз, 1946.
3. Яхин А. Б., Проектирование технологических процессов механической обработки, Оборонгиз, 1946.
4. Соколовский А. П., Курс технологий машиностроения, ч. 1, Машгиз, 1947.
5. Апарин Г. А. и Городецкий И. Е., Допуски и технические измерения, Машгиз, 1956.
6. Бородачев Н. А., Щиголов Б. М., Сведения из теории вероятностей. Энциклопедический справочник «Машиностроение», т. 1, кн. 1, Машгиз, 1947.
7. Городецкий И. Е., Допуски и посадки гладких цилиндрических соединений. Энциклопедический справочник «Машиностроение», т. 5, Машгиз, 1947.
8. Яхин А. Б., Точность обработки. Энциклопедический справочник «Машиностроение», т. 7, Машгиз, 1949.
9. Бородачев Н. А. и Журавлев А. Н., Статистические методы анализа и контроля качества продукции, хода технологического процесса и состояния производственного оборудования. Энциклопедический справочник «Машиностроение», т. 15, Машгиз, 1950.
10. Тищенко О. Ф., Статистический метод контроля. Взаимозаменяемость и техника измерений в машиностроении. Машгиз, 1955.
11. Мягков В. Д., Допуски и посадки. Справочник, Машгиз, 1954.

Խմբագորյան կողմից. ընկ. Զաքարյանի հոգվածը տպագրվում է քննարկման կարգով: Խնդրում ենք ինժեներա-տեխնիկական աշխատողներին՝ արտահայտել իրենց կարծիքը բյուլետենի էջերում:

## ԷՄԱԼԱՑԻՆ ՆԵՐԿԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ ԲՆԱԿԱՆ ՀՈՂԱՑԻՆ ՆԵՐԿԱՆՑՈՒԹԵՐԻՑ

S. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ  
Գործարանի ղիրեկուոր

Ս. ՔՈԶԱՐՅԱՆ  
Գլխավոր ինժեներ

Մինչև վերջին ժամանակներս Երևանի լաքերի և ներկերի գործարանում կարմիր, դարշնակույն, կանաչ և գորշ կանաչագույն էմալները արտադրվում էին ներմուծվող դեֆլուսուային թանկ հումքից, Մոսկվայի Կրասնոպոլեսկի լաքաներկերի գործարանի ուցեպտով: